

02.10.2018թ.


ք. Կապան



ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

2018 թվականի սեպտեմբերի 25-ին կայացել է ՀՀ Սյունիքի մարզի Կապան համայնքի ավագանու արտահերթ նիստը: Նիստին մասնակցել են ավագանու 15 անդամներից 10-ը: Օրակարգում ընդգրկված բոլոր 30 նախագծերը դրվեցին քվեարկության, դրանցից 27-ը ընդունվեցին ավագանու կողմից, 3 նախագիծ չի ընդունվել բավարար «կողմ» ձայներ չստանալով: Ավագանու նիստի ողջ ընթացքը օրենքով սահմանված կարգի համաձայն հեռարձակվել է:

2018 թվականի հոկտեմբերի 02-ի դրությամբ ընդունված որոշումների տակ ստորագրել են համայնքի ավագանու՝ նիստին մասնակցած անդամներից 9-ը: Աշխատակազմը հեռախոսով կապ է հաստատել ավագանու անդամ Վահե Դանիելյանի հետ, որը հայտնեց, որ անձնական պատճառներով ստիպված է եղել մեկնել ք. Երևան: Վ. Դանիելյանը խնդրել է ավագանու նիստի ընթացքում յուրաքանչյուր հարցի վերաբերյալ իր կողմից կատարած քվեարկությունը ընդունելի գիտություն և համարել հիմք:

Հաշվի առնելով համայնքի ընդունած որոշումները ՀՀ Սյունիքի մարզպետարան օրենքով սահմանված ժամկետներում ներկայացնելու պահանջը, որոշվեց դրանք ուղարկել առանց Վ. Դանիելյանի ստորագրության:

Կապան համայնքի ղեկավարի պաշտոնակատար՝  Ն. Ղահրամանյան

Աշխատակազմի քարտուղարության բաժնի պետ՝  Ա. Գաբրիելյան
Աշխատակազմի քարտուղարության բաժնի գլխ. մասն.  Գ. Հովհաննիսյան